ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Ք. Սևան 13.12.2017թ.

Ժամը 14:00

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան

Գնահատողներ՝ Խաչիկ Կիրկակոսյան

Վարդուհի Վարդանյան

Բացողներ՝ Ռոմելա Հարությունյան

Մարի Առաքելյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Մ. Սիմոնյան)

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. **Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**
(Մ. Սիմոնյան)

1.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի կարիքների համար <<Պահնորդական ծառայության>> ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	<<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ
2	ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն
3	<<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. **ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**
(Մ. Սիմոնյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 <<Պանտեռա Սիքյուրիթի>> ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

2.4 <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը /Հավելված 1/, որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը /Հավելված 3/, գնային առաջարկը /Հավելված 4/ և տուժանքի մասին համաձայնագիրը /Հավելված 8/ ստորագրված են Մելքոնյան Գայանե անվամբ էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությունը /Հավելված 2/ և մասնակցի իրական շահառուների մասին տվյալները /Հավելված

2.1/ ստորագրված չեն: Հայտում բացակայում է <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Արթուր Բարսեղյանի կողմից Գայանե Մելքոնյանին փաստաթղթերը ստորագրելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը /լիազորագիր/:

2.5 ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝ տուժանքի մասին համաձայնագրի /Հավելված 8/: ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը ներկայացրել է գնային առաջարկ 3822696 ՀՀ դրամի չափով, որի 5%-ը կազմում է 191134.8 ՀՀ դրամ, սակայն հայտի ապահովման չափը վճարման պահանջագրում նշել է 191134 ՀՀ դրամ: Հրավերի 7.1 կետով սահմանված է, որ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

2.6 Նկատի ունենալով, որ <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի և ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված հայտերը գնահատելու համար անհրաժեշտ է որոշակի հարցերի պարզաբանում, հանձնաժողովը որոշեց ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը կասեցնել և հարցերի պարզաբանման նպատակով հարցում ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

6. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>

(Մ. Սիմոնյան)

6.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարությունից պարզաբանում ստանալու օրվա հաջորդող 2-րդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Վ. Վարդանյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան